ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ՀՀ ԿԳՄՍՆԴՄՍՔՎ-22/04

Ք. Երևան 01.08.2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ -ն, ի դեմս «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Դանիելյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի N 1937-ի, 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումները (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հուլիսի 28-ի N 1383-Ա/2 հրամանը՝ «1163.Մասսայական սպորտ» ծրագրի «11020. Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված ֆինանսական նախահաշվի, կազմակերպությանը հատկացնել 20,107,814 (քսան միլիոն հարյուր յոթ հազար ութ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող

հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել << պետական բյուջե՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.9. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա

ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի ստորագրման օրվան հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, կազմակերպությանը վճարվում է պայմանագրով նախատեսված գումարի 80 (ութսուն) տոկոսի չափով՝ 16,086.251 (տասնվեց միլիոն ութսունվեց հազար երկու հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 20%-ը՝ պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո:

5.2. Կազմակերպության վճարումները կատարվում են սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության, հաշվետվությունների ներկայացման ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի սեպտեմբերի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի. սեպտեմբերի 30-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության պետական մարմնի կողմից սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 հավելվածներով հաստատավում են, համապատասխանաբար, ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, ժամանակացույցը և հանձնման-ընդունման ակտը, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www,escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է հայերեն՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039584 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ **Գագիկ Սաֆարյան** /ստորագրություն/ Կ.Տ.	«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ ք. Ստեփանավան, Չարենցի 124 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022568941001 ՀՎՀՀ՝ 06957798 Էլ.փոստ՝ concepteventsarmenia@gmail.com Տնօրեն՝ **Աննա Դանիելյան** /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1
2022 թ. _____ ____ -ին

կնքված N ՀՀԿԳՄՍՆԴՄՍՔՎ-22/04 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Նախապատրաստական փուլ	«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի եզրափակիչ փուլի մեկնարկից առաջ նախապատրաստական աշխատանքների իրականացում	1.1 Պայմանագրերի կնքում տպագրության, սննդի, հուշանվերների, հուշամեդաների, վկայականների և այլ կազմակերպչական աշխատանքների իրականացում 1.2 Տարածքի ձևավորման և բարելավման համար անհրաժեշտ բաններների տպագրություն Մարզաշապիկների տպագրություն 1.3 Տարածքի ձևավորում դրոշներով <<Start>> և <<Finish>>ցուցանակների տեղադրում 1.4 Ֆոտոզոնայի ապահովում 1.5 Տարածքի ձևավորում և բարեկարգում	Կնքված պայմանագրեր տպագրված գովազդային նյութեր, մարզաշապիկներ, հուշանվերներ, հոշամեդալներ հավաստագրեր և այլն	10.08.2022 թ. - 23.08.2022թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	4982894
2.	Բուն միջոցառման անցկացում	Մրցաշարի եզրափակիչ փուլի անցկացում	2.1 Մարզիչների Երևանից Շորժա տեղափոխման կազմակերպում 2.2 Մասնակիցներին մրցաշարի ընթացքում սննդի ապահովում 2.3 Միջոցառման պաշտոնական հյուրերի դիմավորում 2.4 Մրցումների անցկացում 2.5 Մրցաշարի նկարահանում և	Մրցաշարի անցկացում, պարգևատրման անցկացում, տեսահոլովակի առկայություն, հեռարձակման ապահովում	23.08.2022թ. - 24.08.2022թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	15124920

			հեռարձակում: Հաղթողներին պարգևարության իրականացում, հավաստագրերի հանձնում: 2.6 ամփոփիչ տեսահոլովակի պատրաստում				
3.	Ծրագրի ամփոփում		3.1 Ծրագրի հաշվետվության կազմում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը	Հաշվետվություն	24.08.2022թ. - 10.09.2022թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	
	Ընդամենը						20107814

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039584, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 124
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022568941001
ՀՎՀՀ՝ 06957798
Էլ.փոստ՝ conceptevents@gmail.com
Տնօրեն
Աննա Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2
«ՀՀԿԳՄՆԴՄՍՔՎ-22/04» ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու՝ **«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ**
Ծրագրի անուն՝ **«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում**
Ծրագրի տևողություն՝ **10.08.2022թ. - 10.09.2022թ.**

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1	Ծրագրի համակարգող	14	մարդ	1	140000	140000	0.7
1.2	Սպասարկող անձնակազմ	8	մարդ	2	40000	80000	0.4
1.3	Գնումների համակարգող	10	մարդ	1	100000	100000	0.5
1.4	Հաշվապահ	6	մարդ	1	60000	60000	0.3
1.5	Մրցավարների պարգևավճար	42	մարդ	28	15000	420000	2.09
1.6	Լրագրող-հաղորդավարի ծառայություններ	20	մարդ	2	100000	200000	0.99
	Ընդամենը Ա	**100**				**1000000**	**4.97**
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Սնունդ մասնակիցների և մրցավարների ու լրագրողների համար	2.99	Մարդ/օր	180	3000	540000	2.69
2.2	Տրանսպորտային ծառայություն՝ մարդատար	1.11	Հատ	2	100000	200000	0.99
2.3	Գավաթ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկներին /աղջիկներ և տղաներ/	1.66	Հատ	12	25000	300000	1.49
	1-ին տեղ		Հատ	4	30000	120000	
	2-րդ տեղ		Հատ	4	25000	100000	
	3-րդ տեղ		Հատ	4	20000	80000	
2.4	Հավաստագրեր 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկներին	0.03	Հատ	12	500	6000	0.03

	/աղջիկներ և տղաներ/						
2.5	Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և << զինանշանով	0.33	Հատ	12	5000	60000	0.3
2.6	Շնորհակալագիր՝ թղթապանակով	0.08	Հատ	10	1500	15000	0.07
2.7	Հավաստագրեր բոլոր մասնակիցներին	0.41	Հատ	150	500	75000	0.37
2.8	Մեդալներ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկներին /աղջիկներ և տղաներ/	0.46	Հատ	12	7000	84000	0.42
2.9	Ծաղկեփնջեր 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկներին /աղջիկներին/ և հյուրերին	0.3	Հատ	11	5000	55000	0.27
2.10	Հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին	0.77	Հատ	14	10000	140000	0.7
2.11	Շապիկներ մասնակիցներին և մրցավարներին	4.48	Հատ	180	4500	810000	4.03
2.12	Մասնակցության համարներ մրցաշարի մասնակիցներին	0.66	Հատ	150	800	120000	0.6
2.13	Մրցաշարի նկարահանում և ուղիղ հեռաարձակում համացանցով	3.98	Օր	1	720000	720000	3.58
2.14	Մրցաշարի վերաբերյալ տեսահոլովակի պատրաստում	1.66	Հատ	1	300000	300000	1.49
2.15	Միջոցառման փակման համար շարժական բեմ և լեդ էկրան	4.53	Օր	1	820000	820000	4.09
2.16	Ձայնային տեխնիկայի ապահովում	2.21	անգամ	1	400000	400000	1.99
2.17	Տպագական նյութերի ձեռքբերում և ձևավորում	3.09	անգամ	1	560000	560000	2.78
2.18	Դրամական մրցանակներ՝ 1-ից 10-րդ տեղեր գրաված(տղամարդկանց և կանանց 2 տարիքային խումբ) մասնակիցներին՝ համաձայն կանոնակարգի՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները:	71.25	-	-		12897424	64.14
	1-ին տեղ			4	1267948	5071792	
	2-րդ տեղ			4	755128	3020512	
	3-րդ տեղ			4	498718	1994872	
	4-րդ տեղ			4	178205	712820	
	5-րդ տեղ			4	114102	456408	
	6-րդ տեղ			4	82051	328204	
	7-րդ տեղ			4	82051	328204	
	8-րդ տեղ			4	82051	328204	
	9-րդ տեղ			4	82051	328204	

	10-րդ տեղ			4	82051	328204	
	Ընդամենը Բ	**100**				**18102424**	**90.03**
Դ	**Վարչական ծախսեր**						
4.1	Պարտադիր հարկ/տուրք					1005390	5
	Ընդամենը Դ					**1005390**	**5**
	Ընդամենը					**20107814**	**100**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039584 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 124
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022568941001
ՀՎՀՀ՝ 06957798
Էլ.փոստ՝ conceptevents@gmail.com
Տնօրեն
Աննա Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
2022 թ. _____ ____ -ին
կնքված N N ՀՀԿԳՄՆԴՄՍՔՎ-22/04 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Միջոցառման															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999/364	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարանցկացում»	0	0	0	0	0	0	0	16,086,251	20,107,814	20,107,814	20,107,814	20,107,814	20,107,814

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039584, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 124
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022568941001
ՀՎՀՀ՝ 06957798
Էլ.փոստ՝ conceptventsarmenia@gmail.com
Տնօրեն
Աննա Դանիելյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 4
2022 թ. _____ ____ -ին
կնքված N ՀՀԿԳՄՍՆԴՄՍՔՎ-22/04 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.